

ԵՆԵՔՆԵՆԻ ԼՍԼԼ



9

(192)
Սեպտեմբեր, 2022

ԲԱԼԼԱԴ ԽՈՒՃՈՒՃ ԵՎ ՏՆԱԾՆԵՆԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՍԻՆ



Իմ քաղաքը
Անվերջ փոթորկվում է
Իր թաքուն, ներքին ծովերի պես:
Իմ քաղաքը
Սրամտության կանոնները
գծում է
Իր նավահանգիստ փողոցների
թաց ասֆալտի վրա,
Որ աղջնակները թռչկոտեն
Դասարան առ դասարան,
Իսկ երբ երբեմն գիշեր է լինում,
Խնամձերն էլ են
ՏՆկոզ-տՆկոզ թռչկոտում
Կյանքի նույն դասարաններով,
Իսկ հետո նայում են՝
Յո տեսնող չեղա՞վ:
Իմ քաղաքը մնացել է
Կարմիր տուֆի և սև տուֆի
արանքում՝
Կրի սպիտակ շերտում:
Իմ քաղաքը
Առավոտյան զարթունք
Եվ մոռանում է գիշերվա
արկածները,
Որ իր բանաստեղծները, նկարիչ-
ները,
Երգասացները, արհեստավորնե-
րը, խելառները
Չտխարեն:
Իմ քաղաքը Նստում է
պառավների և բիծեքի հետ
Իր տների առաջ
Եվ բամբասում է իր թռուցիկի:
Իմ քաղաքը սիրում է իր
հարսներին
Եվ իր փեսաների համար
Ոչինչ խնայում,
Բացի հարևանի հարսներից,
իհարկե:
Իմ քաղաքը
Իր լավագույն տարիներին
Երգում էր՝ կեպին աչքերին
քաշած,
Իր հարյուրավոր զարեջրատնե-
րում նստած,
Երբ սովետ էր ու կյանքը՝ էժան,
Երբ սովետ էր ու մահը՝ թանկ:
Իմ քաղաքը
Սովորում էր համբուրվել Գորկա
այգում:
Իմ քաղաքը
Սովորում էր տղամարդ դառնալ
Տեքստիլ կոմբինատի

ֆեզներում,
Ուր լիքը ջրահարսներ էին լողում՝
Մոլորակի հյուսիսային կողմերից
եկած:
Իմ քաղաքը
Իր տանիքների վրայից
Սուլում էր հին ու նոր աստված-
ներին.
Նրանք լսում էին, թե չէ, չգիտեմ,
Բայց որ աղավաղները
ճախրում էին կապույտ
երկինքներում՝
Կարող են վկայել:
Իմ քաղաքը պատվի մասին
իր պատկերացումները
Իր սրտի մեջ էր պահում:
Իմ քաղաքը շատակեր չէր,
Սակայն պարկերով էր զնուն
ծմերուկը,
Արկղերով՝ պոմիդորը,
Ջեյթունը դույլերով,
Իսկ երշիկը, բաստուրման և սու-
ջուխը, եթե շարեիր իրար ետևից,
Յոթ անգամ կգրվեր մոլորակը,
Իսկ ութերորդ անգամին
Ընդամենը մեկ թիզ չէր հերիքի,
Եվ այդ մեկ թիզի արանքում
Ապրում էր իմ քաղաքը՝
Ցուրտ ծնեմներին՝ դռները բաց,
Եվ սիրտը բաց,
Անուշ գարուններին
Չերվա խաշանը վառելով
Եվ աչքերը ծխով լի,
Իսկ ամառները բալը շաքարի
հետ լցնում էր շշերի մեջ,
Եվ կախում էր թոխերի,
Փայտանոցների, ածխանոցների
պատերին,
Որ արևներ գան ցրտերի
ժամանակ,
Իր ծերության ոսկորները
թաթախելու համար,
Բալոդու աշնանային
ուրախություններով:
Իմ քաղաքը
Տեղյակ չէր աստվածներից,
Նա ոչ աթեիստ էր, ոչ ֆարմասոն,
Ոչ հեթանոս, ոչ առաքելական,
ոչ ֆրանկ:
Նա իր նարդին էր գլորում,
Եվ իր փաստոնն էր խաղում
Բոշի պուրակում,
Բայց նա ոտքի էր կանգնում,

Երբ կարճ Աղասը
Իր գլխի վրա դրած էր տանում
Իր զավակներից մեկի դագաղի
կափարիչը:
Եվ նա խաչակնքում էր,
Երբ մահվան թափորի ետևից
Անցնում էր փողային նվագա-
խումբը
Չանդիսավոր և հպարտ՝
Մոցարտի Ռեքվիեմի նվագները
Այնքան էլ լավ չնվագելով:
Իմ քաղաքը
Չիշաչար չէր,
Բայց նա ոչինչ չէր մոռանում,
Իսկ եթե մոռանում էր,
Չարցնում էր Դոնդիկովին,
Եղջատովին և Գ. Սարգսյանին:
Իմ քաղաքը
Արվեստներ ուներ և մարդիկ
ուներ արվեստով ապրող.
Տեղով մեկ թատրոն էր
Իմ քաղաքը:
Նրա ուրախությունը բանավոր էր,
Իսկ տխրությունը
Բալի, խնձորի, տանձի և
ջուջուլայուզի պես ծառեղեն,
Կուզես քաղիր, կուզես ոչ:
Իմ քաղաքը
Թաղ առ թաղ, մայլա առ մայլա
Երազանքներ ուներ զարմանալի:
Եվ կռիվներ էր անում
Դանակով, փայտով, զորամատե-
րից գողացած
Պայթուցիկներով, ազդանշանա-
յին հրթիռներով:
Իմ քաղաքը
Եռում էր սիրուց:
Բոլորը սիրում էին բոլորին,
Նամանավանդ, երբ հեռու էին լի-
նում:
Իմ քաղաքը
Սիրում է փողը, որ շառլեր այն
Ռեստորաններում, բարերում,
Չարսանիքներում, ծովափնե-
րում, թաղումների ժամանակ,
Այո՛, նա թաղումների ժամանակ,
Երբ զգույշ մոտենում էր
Մահվան վիշտը փարատելու
եկած
Նվագողներից դիուլահարին,
Եվ մի բան էր խոթում նրա
գրպանը,
Իհարկե, այնպես, որ տեսնողը
տեսնի:
Իմ քաղաքը տեսնող էր.
Ամեն ինչ տեսնում էր և գիտեր,
Սակայն ձև էր թափում, թե չգիտի:
Իմ քաղաքը
Լոպպազ չէր, բայց գիտեր,
Որ ոսկին փայլում է:
Եվ այդ պատճառով
Նա հարկ էր համարում
Այդ մասին հուշել մնացած
աշխարհին:
Իմ քաղաքը
Ցնձում էր կյանքի մեջ:
Իմ քաղաքի բարերում Եվրոպա
էր (համարյա Փարիզ),
Ուր տանգո և շեյկ էին պարում:
Իմ քաղաքի ռեստորաններում
Արևելք էր,

Ուր ծաղկում էր ռաբիսի խոտը:
Իմ քաղաքի բանվորական ճաշա-
րաններում
Օվկիանոսային անգլուխ ձկներ
էին
Տապակվելուց առաջ պոչով
անում,
Թե իբր բարև,
Իսկ կավե չանախներում
Եփվում է աշխատավորի ուրա-
խությունը:
Եվ որ ամենակարևորն է.
Բոլորը վերջում գնում էին
Գծի ետև կոչվող թաղ՝
Խմելու չանի փառապանծ
զարեջուրը, որը լցնում էր
Լոնդոն անունով մի արդար
քաղաքացի:
Իմ քաղաքը
Ցնձում էր կյանքի մեջ,
Ամեն օր նա իր ժամացույցը
ուղղում էր
Տեքստիլ կոմբինատի չչակով
Եվ շտապում էր ապրելու:
Իմ քաղաքը աշխատում էր
գիշերը, ցերեկը և երեկոյան,
Էլի ցերեկը, երեկոյան և գիշերը,
Չետո երեկոյան, գիշերը և ցերե-
կը,
Նրա աչքերը քնաթափախ էին
Աշխատանքից և սիրուց,
Նա աշխարհի բոթիկ ոտքերի հա-
մար գուլպաներ էր գործում:
Եվ որպեսզի դա քիչ չթվա,
Նաև կոշիկ էր հագնում աշխար-
հին
Եվ փառք էր տալիս գործարան-
ներին,
Աստվածներին, ֆիզիկոսներին,
արհեստավորներին:
Մարզիկների համար նա ներբող-
ներ էր հորինում
Ավելի վսեմ, քան Պինդարոսը:
Նրա նկարիչները գիտեին
Աշխարհը գեղեցկացնելու կանո-
նը:
Նրանք երբեմն վրձններով
Ներկ էին քսում երկնքի կտավնե-
րին,
Որ աշխարհը շեն լինի:
Նրա երգասացները
Դուրուկից լավ էին երգում կարո-
տի մասին,
Որ բերել էին իրենց հետ, իրենց
հին հայրենիքներից:
Իմ քաղաքը
Սիրուց մերժվածներին
Միաթարում էր մի անեկոտով,
Նա մի առակով ետ էր կանչում
Տրտմության անապատներում
մոլորվածին:
Իմ քաղաքը
Սիրո մեջ հաջողակներին
Տանում և լուսանկարում էր,
Որ աշխարհից չպակասի սերը,
Որ տեսնողը շատ,
Իսկ երազանքը անսպառ և
ազնիվ լինի:
Իմ քաղաքի հացը իր սրտում էր:
Իմ քաղաքը
Անվերջ փոթորկվում էր

Իր բարբառի տափաստաննե-
րում,
Իր բարբառի ըմբոստությունը
Քաջություն էր տալիս պատանի-
ներից,
Իր բարբառի գը-ն ու կը-ն
Պաշտպանում էր իր աղջիկներին
ու հարսներին
Օտար և վավաշուտ աչքերից,
Իմ քաղաքի
Երեխաների ուզեմզը-ն
Խելքահան էր անում ծնողնե-
րին...
Կարճ կապեմ.
Իմ քաղաքը
Չի թվարկվում, չի մասնատվում,
չի փաթեթավորվում.
Իմ քաղաքը տեղով մեկ թատրոն
է,տեղով մեկ բանաստեղծություն,
Այսինքն ստորգետնյա քարիզ:
Նա իր ներքին առոգանությամբ
ոռոգում էր
Իմաստները հայրենիքի
Եվ հայրենիքը իմաստունների:
Իմ քաղաքը
Իր փլատակների տակից
Իր զավակների մարմինները հա-
նելու հետ հանում էր նաև գրքերը
Եվ շարուն էր փողոցներում
Դագաղների կողքին,
Որ հետո էլ իր ապագա երեխեքը
Կարդալու բան ունենան:
Իմ քաղաքը ցուրտ գիշերներում
Նստում էր խարույկների մոտ,
Եվ տաքացնում էր իր չոքերը,
Թե՞ սիրտը՝ չգիտեմ,
Սակայն դառնության ու սգի
Կարծր օրերի մեջ էլ
Նա չէր մոռանում
Թափ տալ իր շորերից փոշին:
Իմ քաղաքը գիտի, որ իրական
վիշտը աղամանդ է դառնում,
Միայն թե նա ներսերում է ցոլում,
Թաքուն, թաքուն ներսերում
սրտի,
Եվ այդ ներսերի զորությամբ
Իմ քաղաքը մարդ մնաց:
Ոչինչ, որ վիրավոր է դեռ,
Վերքերը, որ խորն են
Դեռ կփակվեն մի օր,
Եվ Ախուրյանը, որ հոսում է
Ոչ միայն տափաստանով Շիրա-
կի, այլ հորդում է նաև իմ քաղաքի
երկինքներով,
Նա՛ որպես զուլալ մի թաշկինակ,
Որպես հոգու մի դաստառակ,
Դեռ լվալանու և սրբելու է աչքերը
Իմ քաղաքի:
Եվ մի քամի է գալու
Ջաջուռի կողմերից
Եվ սանրելու է
Խուճուճ մազերը տնաշենի
Իմ քաղաքի:

ՀԵՌԱՅՈՂ ՀՈՂՈՒ ՍԵՂԵՂԻՆ

շոգեքարշը»-2013թ., «Չգիտեմ»-2016թ.:

Կյանքից հեռացավ սիրված մանկագիր, բացառիկ մարդ, արհեստավարժ ու նվիրյալ բժիշկ, ԳՊՄ անդամ Սուքիաս Եղիայի Աղալարյանը...

Էլի ընտրյալ տեսակից մեկը պակասեց: Ընտրյալ տեսակից մեկն էլի գնաց հավերժին միանալու:

Աղա էր եղբայր, կեցվածքով, իսկ երբ մատը կայցնում էր լարերին թառի՝ լսվում էր հոգու մեղեդին-անաղարտ, զուլալ, արծազանք պահող...

Սուքիաս Աղալարյանի կենսագրությունն էլ է արծազանք պահող: Նրան ճանաչողների ուն-

կերում դեռ երկար տրոփելու է այս Մեծ ու կենսասիւնը մարդու հոգու մեղեդին, որը դրսևորվում էր բանաստեղծությամբ, երգով, երաժշտությամբ, ծաղրանկարներով:

Ինչին ձեռք էր տալիս՝ կանաչում էր, ինչին մոտենում էր՝ շնչում: Ապրող էր ու նաև բժշկող: Երբ շտապ էր, բացառիկ էր ու անփոխարինելի:

Այս անփոխարինելի դեպքում կփոխվի՞ արդյոք մեր մեջ եղած ժամանակային ձևը... Կփոխվի, բայց շատ ուշ:

...երկար կարծազանքվի մեր ունկերում, կերևա մեր մտքում ու աչքերին: Կհիշեցնի բացակայությունը, երբ իր կարիքը կունենանք... Իսկ դա միշտ կլինի:

...Իսկ իրականության մեջ մեր առանց այն էլ այսքան թանկ ու այսքան քաղցր հողն ավելի թանկացավ: Ուրեմն պահենք պահպանենք այս փոքրիկ հողը: պահենք-պահպանենք մեր փոքրիկ հայրենիքը: Սա էլ թող լինի Սուքիաս Աղալարյանի պատգամը մեզ՝ ժամանակի մեջ հերթապահողներին...



ԳՊՄ Չիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի և Չիրակի մարզային գրադարանի նախաձեռնությամբ 2022թ. սեպտեմբերի 9-ին Գյումրիում անցկացվեց «Չարենցը և Գյումրին» խորագրով միջազգային գիտաժողով՝ նվիրված մեծանուն բանաստեղծի ծննդյան 125-ամյակին, որին մասնակցում էին գիտնականներ, գրողներ, Չարենցի պոեզիայի սիրահարներ:

Ինչու սկսած առաջին երազային երանգով սիրային բանաստեղծություններից մինչև երազի, խռովքի դատապարտման մոտիվները: Դրա պարզ վկայությունն է Սոմայից մինչև Գարդազողի ճանապարհը, Շամիրամից մինչև Զիու Մուրթը, եմալե պոեզիայից մինչև Նավակից: Գաղտնիք չէ, որ Չարենցի բոլոր խորհրդանշանները գերազանց խորհրդանշան էին, այսինքն՝ Սերը, որի միջոցով նա տեսնում է իմաստավորում է մերք դարձարձիկ տեսիլները «Տեսիլաժամեր»-ում, մերթ հուսահատ սերը «Երեք երգ տխրադալուկ աղջկան» շարքում, մերթ գունային - հոգևոր գամմա «Ծիածան»-ում, մերթ Գայրենիքը «Հրո երկիր» շարքում և այլն: Միջանցիկ հավելենք, որ ընդհանուր առմամբ Չարենցի գրեթե բոլոր հայրենասիրական բանաստեղծությունների մեջ Գայրենիքը արտահայտվում, երևում, դրսևորվում է կնոջ տեսիլով, ամենայն հավանականությամբ, իր խորքում միավորելով մայր Գայաստանի Կին - Մայր - Նախամայր հավաքականությունը:

«Անշուշտ, Չարենցը վիթխարի ուժի բանաստեղծ է, և նրան ընթերցելը՝ նրա բանաստեղծության գաղտնիքին առնչվելը, ուժեղի ընտրություն է, քանի որ եղիշե Չարենցը հայ բանաստեղծության ընկճված երգի մեջ բնական շեշտերով գարգացրեց ազգային հպարտության ու մարդկային արժանապատվության թեման՝ բերելով իր ժամանակի կենսական ուժն ու նկարագիրը», - գիտաժողովի բացման խոսքում ասաց Կենտրոնի տնօրեն Ա.Չայրապետյանը:

Ընթերցողին ենք ներկայացնում ամերիկյան արձակագիր Մարգարիտ Դերանցի հեռահար, բայց սրտամոտ խոսքը մեծ բանաստեղծի քննարկության մասին:

ՄԻՍՏԻԿ ԼԻՐԻԿԱ

Եղիշե Չարենցը այն գրողներից է, որի տաղանդի հզորությունն ու ստեղծած գրականությունը իր ժամանակի մեջ ու իր ժամանակից դուրս նոր ժամանակաշրջան է ամփոփում՝ պայմանավորելով դրա ընդհանուր նկարագիրն ու գեղարվեստական մակարդակը:

Միանշանակ դարաշրջանը կփոխվի, երբեմնի հեղաշրջող գաղափարախոսությունները չիք կդառնան, բայց հանձարի արարումը, հզոր անհատականությունների հակասական հմայքը չեն խամրի: Ըստ իս՝ հենց սիրո գեղագիտական դրսևորման մեջ է արտացոլվում մեծերի յուրահատկությունն ու գաղտնիքը: Այս համատեքստով կարող ենք եզրահանգել, որ Չարենցյան սիրո աշխարհը երբեք չի կարող հնանալ, ինչպես չի կարող հնանալ սիրո հույսով բացվող ցողազանա առավտը:

Չարենցյան սիրային պոեզիային հատուկ է և՛ չարենցյան բանաստեղծական աշխարհի հզոր շունչը, և՛ նուրբ լիրիկան: Նա այն հավաքույտ բանաստեղծներից է, որոնց ներկայական ամբիջակությունն ամեն վայրկյան տոգորվում է փիլիսոփայական հակադրածուծով, դա նախառաջ տարերային և խոհական հույզերի արգասիք է, որ դրսևորվում է որպես հարցականներ սիրո, երազի ու միասնության վերաբերյալ: Չարենցյան սերը նման է օվկիանոսի: Օվկիանոսն ունի ապշեցուցիչ, նույնիսկ հա-

կադիր դրսևորումներ. կարող է լինել մոլեգնող, կործանող, ոչնչացնող, բայց կարող է վերածվել խենթաբալու աստիճան շոյող, մաքրամաքուր, նրբության մեջ կոհակվող ալիքների:

Եկեք քննարկենք սիրո դրսևորումների առավելականությունը չարենցյան պոեզիայում:

ԳՐՈ ԵՐԿԻՐ շարքում (1913-1916 թթ.) աննյութացած կին ու քույրն է. «Ախ, կին-ցնորք, քույր, Շամիրամ ու Աստված», ՏԵՍԻԼԱՄԵՐՈՒՄ (1915 թ.) անցյալի երազ սիրո հուշերն են, «ԵՐԵՔԸ» բալլադի մեջ ասպետական սիրային եռանկյունին է, ԾԻԱԾԱՆ (1916-1917 թթ.) Կարս քաղաքն է՝ Կարինե Քոթանջյանին և «կապույտ աղջկան» նվիրված բանաստեղծություններով:

«Կապույտը հոգու աղոթանքն է, քույր...կապույտը՝ թախիծ», ԳԱՋԵԼՆԵՐՈՒՄ «Դիր մատներդ կույս՝ աչքերիս վրա, հոգևոր հոգու-աչքերիս վրա», ՈՂՋԱԿԻԶՎՈՂ ՇԱՐՔՈՒՄ (1918-1820 թթ.) «Քո հմայքը կույս, քո հմայքը հեռավոր, նորից ժպտում ես կարոտած իմ հոգուն», «ՓՈՂՈՑԱՅԻՆ ՊՉՈՒՐՅԻՆ» շարքից: «Մանկեցի պես կինը, ծախում են սուտ խենթության թիթեղահունչ ոսկիներ», ԵՄԱԼԵ ՊՐՈՖԻԼԸ ՉԵՐ (1920թ.) Գալանտ երգերում: «Ես ինչպե՞ս Ձեզ չսիրեմ, դուք արվեստ եք և հոգի»՝ նվիրված Արմենուհի Տիգրանյանին, ՏՐԻՈԼԵՏԵՐՈՒՄ «Ձեր դեմքն էմալը, որ երեկ հստակ էր որպես ապակի», ՏԱՂԱՐԱՆ (1920-1921թթ.) Սայաթ-Նովայի ազդեցությունն է: «Վա՛յ քեզ, Չարենց, լավ իմացի, ակացն արա սիրելանի՞ն՝ ամեն բանից լավ ու անուշ սիրելանի դաղն է էլի» և իհարկե «ՆԱՎԶԻԿԵ» (1936թ.) չարենցյան լիրիկայի գլուխգործոցը, իր իսկ Չարենցի խոսքերով, իր ամենաչքնաղ երկը՝ նվիրված Արփիկին, Իգաբելլային: Չարենցյան սիրային լիրիկայում մենք տեսնում ենք սիրո ամենատարբեր դրսևորումներ. այն մերթ երազային պատուհան է, մերթ դասական, վայելուչ, մերթ կրթու ու մարմնական, մերթ ինքնահոշոտման չափ խանդաբորբոք, մերթ սիրո ու ստեղծության բախում, որ հստակորեն վերածվում է «անկունային սարսափի»: Բանաստեղծի սիրո թափառումները անանձնական են: Դրանք անցյալում են, ներկայում, դրանք ապագա չունեն: Այստեղ նորից, արդեն որերորդ անգամ, հաստատվում է Պոետի սևեռում մարգարեական շնորհը:

«Կարմրագետս դահիճը» բանաստեղծությունը տարբերվող ստեղծագործություն է չարենցյան սիրո խարխափումների պատկերասրահում: Ստորև ներկայացնում ենք 1916 թվականին գրված բանաստեղծությունը:

Կարմրագետս դահիճը

Դու կղմես քո գլուխը իմ բարձին՝ Սև հյուսերը ջրվեժի պես թափած

վար, Սրտատրոփ, լուռ կսպասես հարվածին՝ Գոհ, անտրտուն, երազորեն - հոգեվար:

Կիցմի՛, կիցմի՛ իմ հարվածը մահաբեր Կույր հարվածը կարմիր հագած դահիճի: Դրսում քամին կծիծաղի անտարբեր, Ու մութը չար, կխտանա ու կաճի: Բայց մեռնելուց առաջ, վերջին վայրկյանին, Դու կտեսնես և կծպտաս հպարտ, գոհ, - Որ դահիճը, այդ կարմրագետս վայրենին Գամբուրում է ջրածվող ձեռքը քո....

Ոճական առումով այն միստիկ լիրիկա է: Սա ֆունդամենտալ գործ է մեր տխրությունը կորցրած պատրանքի համար: Այն նաև խաչմերուկային գործ է: Սյուժետային ձևային բանաստեղծություն է, որտեղ մեծ պոետը, դրամատիկ իրավիճակ է ստեղծում, հանգույցը լուծում դաժանորեն: Այս բանաստեղծության մեջ բախվում են իրար հետ հավերժական կանացին ու ժամանակի վայրենությունը՝ իր մերկապարանոց հույզերով: Կարծում են՝ սա մեծ պոետի ներգագնողական անդադարն է սիրուն դաժանորեն: Բանաստեղծությունում բացվում է Չարենցի ու երազի կնոջ փոխհարաբերության ամբողջական խորքը: Սկսած Սաֆոյից, անտիկ դարերից մինչև ասպետական շրջանի տրուբադուրների ստեղծած սիրային բալլադները, լեգենդ - սիրավեպերը, մինչև «Դոն Կիխոտի» առօրեական Դուլսինեան, այնուհետև Արա Գեղեցիկ ապի հայկական թագուհի Նվարդը, Նահապետ Քուսակի և Սայաթ-Նովայի սիրերգերը, մարդկությունը փայփայել է իր ենթագիտակցականում լիրիկալ բնակվող երազ կնոջ՝ հավերժական կանացի փնտրությունը:

Վերիական աշխարհում համարվում, հակադրույթը ներծուլվում է, և արդյունքում ստացվում է ողբերգական վերջաբան: Ժամանակի առօրյա դահիճը, սովալ դեպքում՝ քնարական հերոսը, համբուրում է իր իսկ սպանած զոհի (իր մեջ փշրած հավերժական կանացի ցնորքի) ջրածվող ձեռքը որպես ավստանք կամ քավության իրավունք: Սիրո արձագանքները բախվում են անհատին և անեանում՝ թողնելով տառապանքի շարունակությունը: Պահի խորհրդատուն դահիճի սառնասրտությունն է: Գամբուրում է «գերիզոր կրքերի» խաղը: Բանաստեղծը ոչ մի ձևով չի քննարկում դահիճի ապրումը: Նա դահիճ է, այլ կերպ ասած, մահվան գործիք, որի նպատակը սպանելն է: Կնոջ խռովքը կատարյալ Սերն է: Ընթերցողը հասկանում է Դահիճին, բայց նրան անհայտ է մնում Դահիճի ներսում ապրող տղամար-

դը: Այնուհանդերձ վերջինս խոնարհվում է՝ համբուրելով իր իսկ զոհի, «հավերժական կանացի» ջրածվող ձեռքը:

Մակերեսային ընկալման մակարդակում այն տպավորությունն է, որ սա սադո-մազոխիստական սիրո դրսևորումն է: Ամբողջ սիրո ողբերգությունը թաքնված է մի այլ տեղ: Միֆի մի կողմում Չարենցի գերագույն խորհրդանշան կերպարանավորված կինն է: Առաջին տան մեջ կնոջ նկարագրության վեց ածական շարված են իրար կողք: Այս առումով սա բացառության բանաստեղծությունն է: Կերպավորված տղամարդը դահիճն է, զգացական հարթության մեջ անհաղորդ, սառը կերպար, որը որպես դահիճ ընդամենը հանդես է գալիս մահվան խորհրդանշան:

Բանաստեղծության կենտրոնական կերպարը կինն է. ամեն ինչ պատվում է կնոջ շուրջը. նա արքայական գեղեցիկ դժխտն է՝ լուռ, անտրտուն, երազորեն-հոգեվար իր կերպարով: Կինը նվիրված է Դահիճին ու ընդհանրացնում է համայն մարդկության սիրո երազանքը՝ հավերժական կանացի ցնորքը:

Ռուս գրականության մեջ որպես սիմվոլիզմի հանրահայտ ներկայացուցիչ Ալեքսանդր Բլոկը «Անճանողուհին» շարքում, իր ժամանակի ու տարածության խորհրդանշան պանդուխտ ճշմարտությունը փնտրում է գիմու մեջ՝ In vino veritas, որի փնտրությունը հայտնվում է անճանողուհին արքայործելու անիծված ու վարկաբեկված հոգիների հարությունը: Գիմու մեջ, ոչ սթափ վիճակում չեն ստում, ու հենց այդտեղ հայտնվում է «հավերժական կանացին», հետևաբար ճշմարտությունը:

«Կարմրագետս դահիճը» բանաստեղծության մեջ տղամարդը ստորադասվում է կնոջը: Դահիճը ամեն ինչ կորցրած տղամարդն է, որ կնոջը սիրում է Երկնքում, բայց դավաճանում Երկրի վրա: Երրորդ դեմքով հանդես են գալիս բնությունը, տարածությունը, գիշերը:

Երազի կինը գիտի, որ իր մահվան գնով ինքը կհաղթի մղելով տղամարդուն, սովալ դեպքում՝ կարմրագետս վայրենուն, դեպի ապաշխարություն: Բանաստեղծությունը, բացի սյուժետային լինելուց, նաև պատմողական է, և պատմում է Պոետի ու երազի կնոջ կյանքը, սերն ու կործանումը: Այդ առումով բանաստեղծությունն ունի ամբիջակ առնչություն անտիկ դարերից ձգվող սուրբ երկվության, մինչև միջնադարյան տրուբադուրների տաղերում երգած հավերժական սիրո և հոգու քրոջ կամ անմարմին ցնորքի մոտիվները:

ԽՈՐՀՐԴԱՆՇԱՅԻՆ ԶԱՄԱԿԱՐԳԸ ԷՊՈՍՈՒԲՆ

Էպոսը այլաբանական բնույթ ունի, ասելիքի խորությունը մենք կարող ենք ամբողջությամբ ընկալել միայն այլաբանական-խորհրդանշային համակարգի բացահայտումների ու մեկնաբանությունների շնորհիվ:

«Սասնա Շռեր» էպոսում առկա են հին հայերի նախապատմական ժամանակների հետքերը և տիեզերագիտական պատկերացումները: Էպոսի չորս ճյուղերի հարակցումը կատարված է ոչ միայն արտաբանապես, սոսկ սերունդների հաջորդականությամբ, այլև վիպական ներքին տրամաբանությամբ և գեղարվեստական որոշակի պատճառակցությամբ:

Սասունցի Դավիթը, որը հայ ժողովրդի լավագույն գծերն ու երազանքներն է մարմնավորում, ունենում է մի զավակ, որն արտասովոր ճակատագրի է արժանանում. մնում է անմահ: Հերոսական էպոսը միշտ էլ խզվում է, եզրափակվում գորավոր կերպարով: Դյուցազունները կամ առանց որևէ հետք թողնելու զոհվում են, կամ դառնում քար, պարփակվում այդ քարի խորքում:

Սասնասարն ու Բաղդասարը ակնատես են լինում, թե ինչպես է լեռներից հոսող մի ուժգին առու կտրում-անցնում մի մեծ գետի ամբողջ հոսանքը: Գայթակղված այդ ջրի գորությունից Սասնասարն ու Բաղդասարը գտնում են առվի հոսքի սկզբնակետը և վերջինիս ակունքների վրա վիթխարի ապառաժներից ամբողջ կառուցում: Շուտով Սասնասարն ու Բաղդասարը ձեռնամուխ են լինում իրենց հիմնադրած ամրոցի հարակից տարածքների բնակեցմանը և այդ նպատակով հայտնաբերում են 40 ընտանիք բերելով հաստատվում են այստեղ: Այսպիսով, առասպելական տեսանկյունից՝ սա է Սասուն քաղաքի հիմնադրման պատմությունը: Հինարարական աշխատանքների ավարտից հետո եղբայրները ցանկանում են անվանում տալ իրենց հիմնադրած բնակավայրին: Հենց այս ժամանակ էլ նրանք պատահաբար հանդիպում են ծերունի մի սերմնացանի, որից էլ խնդրում են անվանադրել իրենց կառուցած քաղաք-ամրոցը: Ծերունին էլ քաղաքի անունը կնքում է Սասուն, քանի որ այն կառուցված էր սասնա քարերից:

Քեռի թորոսը ազգակցական որևէ կապ չունի գլխավոր հերոսների հետ, սակայն հետևում է նրանց էպոսի ողջ ընթացքում: Նկատենք, որ էպոսն ստեղծողները մտածված կերպով ժխտորեն են նոր անուններ մտցնում: Հերոսների շատությունը դանդաղեցնում է գործողությունը՝ էպոսի սյուժեին ստեղծող հիմնական տարրը: Այդ պատճառով էլ, որպեսզի չծանրաբեռնեն էպոսը, գուսան-ասացողները երկար

կյանք են պարզում ինչպես Քեռի թորոսին, այնպես էլ Ձեռնով Հովանին ու Ցռան Վերգոյին: Մեկ անգամ հայտնվելով նրանք այդպես էլ մնում են որպես հավերժական քեռիներ և հորեղբայրներ:

Էպոսում հերոսների հիմնական կոնֆլիկտը իրենց գոյությունը պահպանելու համար է. վառ օրինակներից է Միերի մեծամարտը առյուծի հետ: Ըստ ժողովրդի Միերը պատրաստ էր իր ամբողջ ուժն ու եռանդը ներդնելու հանուն հայրենյաց և ժողովրդի բարօրության: Դրա վառ ապացույցն է երիտասարդ Միերի և մարդակեր առյուծի մեծամարտը:

Մեծ և Փոքր Միերները կապվում են Միիր աստծո հետ: Առասպելում դա վառ արտահայտվում է Փոքր Միերի կերպարի մեջ, որը համարվում էր էպոս մտած Միիր արեգակը:

Մեծ Միերը հայտնի է նաև Առյուծածն առյուծ ձևող Միեր անվամբ: Էպոսի համաձայն՝ Սասունում սով է տիրում: Մի ամենի առյուծ փակում է Սասնա ճամփան, և ոչ մի քարավան չի կարողանում մուտք գործել Սասուն: Եվ Միերն անգն մեծամարտի է բռնվում առյուծի հետ, երախից ճղում, երկու մասի է բաժանում առյուծի մարմինը: Այստեղ, բնականաբար, անդրադարձն է Միիրի և ցլի միջև գոտենարտի, ուղղակի ցլի փոխարեն հանդես է գալիս առյուծը:

Վանա լճին առընթեր քարաժայռի «Հալղիի դարպասները», որտեղ հիշատակված են Վանի թագավորություն բոլոր աստվածներն ու նրանց համար սահմանված ամենամյա զոհերի թվաքանակները, հայ ժողովուրդն անվանել է ՄՅԵՐԻ ԴՈՒՌ:

«Ժայռում Միերի անցկացրած մեկ ակնթարթը հավասար է, ինչպես պարզվում է, երկրի վրա մարդկանց ապրած մեկ տարվան», նույն չափերով են չափվել նաև Միերի արագությունը և ճանապարհը:

Ըստ էության, Փոքր Միերը Ազնավաքարից դուրս գալով, երկնքով անցնում է 40 օրվա ճանապարհ 1 սիսթուն և հասնելով հողին ու խրվելով քարերի մեջ՝ հասկանում է, որ իր ժամանակը դեռ չի հասել. նա վերադառնում է Ազնավաքար՝ նույնքան ճանապարհ անցնելով:

Ուսումնասիրելով էպոսը, նրա խորհրդանշային համակարգը, տեսնում ենք բնության երևույթների ամբողջական կապը կերպարների հետ՝ հայելային արտացոլանքը: Գտնելով կրակի պաշտամունքի հետքեր, որոնք բնորոշ են հեթանոսական շրջանին, հանդիպում են նաև հնագույն ժամանակներից մնացած հավատալիքներ՝ ջրի, լույսի, հողի, երկնային լուսատուների և նախնիների պաշտամունքը:

Մեր հերոսների՝ բնության ինքնագիտակցության գալու այդ քայլին հետևում է Սանասարի «ծով» մտնելու համարձակույթ-

յուն ունենալու քայլը, «Աստու հրամանքը» ու ծովի բացվելը (ասել է թե՛ «Աստված» տեսնում է մեր հերոսների ինքնահայտնության գալը և նրանց գորավիզ է լինում): Ծովի բացվելուց հետո՝ «Սանասարի աչի առջև եղավ չոր գետին», մինչդեռ «Բաղդասարի աչից ծով կերևար»: Էպոսում «ծովը» խորհրդանշական իմաստ ունի. արտահայտում է հերոսների ամենօրյա կյանքը՝ ալեբախություններով ու պատահական դրսևորումներով: Բաղդասարը մնում է կյանքի գեղին, խրվում-խեղդվում է կյանքի ծովում այն դեպքում, երբ Սանասարը հաղթահարում է այն և մնում է նրա աչքի առաջ «ծովու տակ»՝ «չոր գետնի վերա» (խորհրդանշում է հաստատուն կյանքը, ի տարբերություն «ծովային»՝ հեղինեղևի կյանքի): Բացվում է «մեկ պարտեզ», պարտեզում՝ «քոչք» (բնակավայր) ու սարայ (պալատ), «հավուզ», հավուզից բխող «ջուր»: Չարմանհարաշ պարտեզում էլ Սանասարը տեսնում է իր երազած Քուռկիկ Ջալալին՝ «Ենտեղ կապուկ, թանք սաղաֆին վերան պատրաստ, Կեծական թուր վերան կախած»: Այդուհետ մեր հերոսը պարտեզում «եկեղեցի» տաճար տեսնելուց ու այդտեղ մտնելուց հետո ահ ու սարսափի մեջ է ընկնում, վայր ընկնում, քնում, երազ տեսնում:

Պարտեզի նկարագրությունից առաջին տպավորությունն այն է, որ դա խորհրդավոր երկրի կամ դրախտավայրի՝ հերոսի ապրած աշխարհի հեռու՝ անցյալի խորքերում գտնվող աշխարհի նկարագրություն է՝ մեր էպոսին հատուկ խորհրդանշային լեզվով ներկայացված: Սանասարի տեսիլքում հայտնված խորհրդավոր «պարտեզը» նրա նախնիների երկիրն է՝ Հայաստան աշխարհը, որը զգալու վերապրումն է ունենում նա տվյալ պահին:

Սանասարը և Բաղդասարը կապվում են հայ առասպելաբանության մեջ ամպոսային հերոսների հետ, որոնք, կռվելով ջրի ակունքը փակող հրեշի հետ, սպանում են նրան, և ազատում արեգակի աղջկան՝ այս դեպքում Դեղձուն Ծամին:

Լուսնային և արեգակնային հատկանիշներով և գուշակության ու կախարհության շնորհներով էին օժտված նաև էպոսի կանայք՝ Դեղձուն Ծամը, Խանդութը և Գոհարը:

Երկնային լուսատուներից է կայծակը, որը դիցաբանության մեջ երկինաստ խորհրդանիշ է, ստեղծարար և ավերիչ: «Ծովնարը» բարբառներում նշանակում է կայծակ: Ազգագրական տեքստերում ներկայացված է որպես կայծակի աստվածուհի:

Ոգեգիտության և երագաբանության մեջ Հին ոգեղենության, ուժի, աստվածատու շնորհների, կյանքի անկասելի ընթացքի, «մուրագի» (Քուռկիկ Ջալալուն էպոսում տրված բնութագրումներ-

րից է) խորհրդանիշ է: Էպոսատեղծ մեր ազգը այդ խորհրդանիշն է դիմել՝ արտահայտելու իր կյանքի՝ անչափ կենսալից աստվածատու խորհուրդներից մեկը: Քուռկիկ Ջալալին միջնադարյան Հայի երագի խորհուրդներից մեկն է, ու բնավ պատահական չէր միջնադարյան Հայի ոգու տեսլականում Չիու տեսիլքի հայտնվելը: Պատահական չէր նաև լեզվական ձևի Քուռկիկ Ջալալի ընտրությունը: Չիմ Քուռկիկ հավերժ երիտասարդ, չծերացող, ժամանակ-տարածությունում հավերժ նորոգվող է, Ջալալին՝ հրեղեն, անմահ ոգի է և ոչ մարմնավոր գոյություն:

Էպոսում Քուռկիկ Ջալալու մասին առաջին հիշատակումն արվում է Սանասար և Բաղդասար ճյուղում: Ծովի տակ՝ զարմանահրաշ պարտեզում էլ Սանասարը տեսնում է իր երազած Քուռկիկ Ջալալին՝ «Ենտեղ կապուկ, թանք սաղաֆին վերան պատրաստ, / Կեծական թուր վերան կախած»: Էպոսի թաքնագիտական շերտերում թափանցելը մեզ ասում է այն մասին, որ Քուռկիկ Ջալալին խորհրդանշում է մեր դյուցազունների, նրանց մեծ Հայոց ու Փոքր Սասնա տան նախնյաց ոգին, որի ապավեն ու հովանավոր տիեզերական գորությունները նրանց հետագայում գորավիզ էին կանգնելու կենսական ոգորանքներում: Քուռկիկ Ջալալուն (նախնյաց հրեղեն ոգուն) ենթարկեցնելու փորձությունը ևս արժանի է ուշադրության: Քուռկիկ Ջալալին, կանաչեղևով, որ իրեն տեր կանգնելու փորձ անողը հողածին է (հետևաբար չի կարող իրեն՝ որպես հրեղեն էակի, տիրություն անել)՝ նրան բնության տարերքների արեգակնային հրի, օդի, ջրի, հողի փորձություններին է ենթարկում: Ի վերջո համոզվելով, որ Սանասարն էլ է իր պես հրեղեն թույլ է տալիս, որ «հեծնի» (տեր կանգնի իր նախնի ոգեղեն ժառանգությունը): «Ենոնք (Սանասարն ու Քուռկիկ Ջալալին) հրեղեն են, մեկ-մեկու լեզու կը խասկընեն», - ասված է էպոսում:

Չիմ էպոսում նաև իմաստուն խորհուրդներ է տալիս իր տերերին:

Թուր կեծակի (կայծակի)- այն սովորական թուր չէր: Կտրում էր 40 գոմշի կաշին, 40 ջրաղաց քարը, երկու կես անում Սարա Մելիքին և այլն: Ժողովուրդը Թուր Կայծակին պատկերացրել է իբրև իսկական կայծակ, որից կրակ է թափվում ու վառում մարդկանց: Նույն պատկերացմամբ՝ այն գողվել է երկնաքարից կամ շանթաքարից, կամ ձեռք բերվել ծովի հատակից: Այս դեպքում պետք է նկատել, որ թուրը խաչածն է, ինչը երկակիության նշան է ուղղահայաց և հորիզոնական ուղիղներ: Թուրն ուներ միասնականության, հզորության, ուժի խորհուրդ:

«Տեր կեծակնին» ևս էպոսի գլխավոր խորհրդանիշն է: «Հացն ու գինին, տեր կեծակնին»

երդունը էպոսում տրվում է հերոսների կյանքի կարևորագույն պահերին, օրինակ՝ տուն-տեղ հիմնելու, մեծ զոհաբերություն կատարելու պատրաստակամություն հայտնելու, ահեղ թշնամու դեմ մեծամարտի դուրս գալու, Քուռկիկ Ջալալուն թշնամու կապանքներից ազատելու կապակցությամբ, ուստի դրանից հետևում է այն, որ երդման «Տեր կեծակնին» խորհրդին հույժ կարևոր տեղ է հատկացվում: Ո՞վ է մեր դիցաբանների այդ շատ պաշտելի Տեր կեծակնին: Լեզվաբանորեն երկու՝ հոմանիշ իմաստով կարելի է դա հասկանալ. կամ՝ որպես գերագույն անձ նշանակող՝ կենդանիների (ամբողջ կենդանի աշխարհի, բոլոր կենդանի արարածների) Տեր, կամ էլ որպես՝ դարձյալ գերագույն անձ նշանակող՝ կենդանի (միշտ ապրող, շնչող) Տեր: Այսինքն՝ երկու դեպքում էլ Տեր կեծակնին գերագույն անձի (գորության, էակի) իմաստով է հասկացվում: Իսկ որպես այդպիսին հայ հավատքային ընկալումներում պատկերացվել է Արարիչը՝ երկնային Հայրը, ում էլ հենց խորհրդանշում է ավանդապահ մեր էպոսի Տեր կեծակնին:

Էպոսում բազմիցս արժարժվում է «Խաչ Պատերազմին» խորհրդանիշը: Խորհրդանշական է, որ բոլոր տեղերում «Խաչ Պատերազմին» մեծատառ է գրվում, ինչը վկայում է խորհրդանիշի կարևորությունը: Կան մասնագետներ, որոնք Խաչ Պատերազմին նույնականացնում են Վահագնին: Այն միշտ հիշատակվում է «Տեր Կենդանին»՝ Արարիչ եւ «Աստվածածին» խորհուրդների հետ: Քանի որ «Տեր Կենդանին» Արարիչն է, իսկ Աստվածածինը՝ Աստվածամայր Անահիտը, հետևաբար այդ խորհուրդներից հետո մշվող «Խաչ Պատերազմին» նրանց որդին՝ արարչական ընտանիքի երրորդ անդամն է:

Լիլիթ ՍԱՐԴՈՅԱՆ
Գյուճուրու թիվ 1 ավագ դպրոցի
աշակերտ
Դեկավար՝ Ինա ԳՅՈՂԱՎՅԱՆ
Արվեստաբանության
մագիստրոս



«Պոլսահայ գրականությունը 20-րդ դարի կեսից մինչև մեր օրերը» համահայկական գիտաժողովի շուրջ

«...Ու կարկեհանի ու մեղեսիկի գույն շոգիններու մեջ կլուծվեին Կապուտկապանի ու Կապուտլուսի լեռներուն թևապարը...» (Գ. ՄՃՈՒՐԻ)

Համազգային հայ կրթական և մշակութային միության և Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական

պետական մանկավարժական համալսարանի համագործակցությունը ամուրամալի շահեկան եղավ այսօրվա հայ իրականության և մասնավորապես հայ գրականության կարևոր մի թևի ավելի հանգամանալի ներկայացման համար. վկան սեպտեմբերի 23-ին Մանկավարժական համալսարանում կայացած համահայկական գիտաժողովն է: Ակադեմիական մի քանի ժամերը նպաստավոր պայմաններ ստեղծեցին

և հնարավորություն ընձեռեցին ծավալելու հիշարժան և արդյունավետ գիտական աշխատանք: Սկսած արևմտահայերենի հարցերի քննարկումից մինչև հարազատ, մի ամբողջ սերնդի մասին գրականության արժարժած՝ փիլիսոփայական, տեղագրական, պատմագրական և իհարկե գրականագիտական քննարկումներ՝ ճակատագրի կամոք աշխարհով մեկ սփռված հայի մի մի բեկորի այս էլ որբերող ճյուղ ու

սաղարթի ձեռամբ՝ լայն աշխարհագրությամբ՝ Լիբանան, Թուրքիա, Քուվեյթ, ԱՄՆ, Ֆրանսիա, Հայաստան ու Արցախ: Առաջին հերթին՝ հայապահպանության, ապա հայ մշակույթի ու գրականության հարցեր, սփյուռքյան՝ ոչ միայն նշված ժամանակաշրջանի մեր պարբերող մտորումներ ու մտահոգություններ՝ հայ մտավորականների մի բույլի քննարկման լայն շրջանակով, բազմաբևեռ ու կարևոր, նաև կենդանի, մարդկա-

յին ու հայեցի շփում, այն, ինչը երբևիցե մանրուք չի համարվել, իսկ մեր օրերում՝ առավել ևս: Արդյունքում կլինի նաև գեկուցումների տպագրված տարբերակը՝ ժողովածուի տեսքով՝ ի շահ հայ գրականության՝ խաղաղ օրերի «կապույտ լույսի» ներքո:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկն.

Լուսինե ԱՐԱՋԱՆՅԱՆ /Վարիացիացիներ «Մենք կին ենք եղել» գրքից/

ՀԱՅԵԼԱԳԻՐ

Հենց որ ներս մտավ, մտածեցի՝ համակրելի աղջիկ է: Հետո բերանը փակող շարժը հանեց, ինքս ինձ համար ճշտեցի՝ չէ, համակրելի կին է: Հետո բերանը բացեց, ինձ ուղղեցի՝ չէ, ուղղակի կին է... Եկել էր՝ մազերը ներկելու: Ես իմ հերթին էի սպասում, գեղեցկության սրահում ոչ ոք չկար, ու լռություն էր, մինչև որ նրա հեռախոսին զանգեցին:

- Բարև, Լիան,- ասաց,- ես տանը չեմ... Չէ՛, այ՛նտեր շուն, չեմ խաբում, տանը չեմ... Ախշի՛, երեխեքս արև, ասում եմ՝ տանը չեմ, այ՛նտեր անտեր, վարսավիրանոցում եմ, եկել եմ մազերս ներկեմ, կտրեմ... Ի՞նչ տեղ... չէ, տեղ չունեմ գնալու... Տո այ՛նտեր, խի որ մազերը ներկում եմ, պարտադիր մի տեղ պիտի գնամ... Դե որ չէ, գորո՞ք քեզ... Դե մի՛ խանգարի, ասի՛ զբաղված եմ, լռվի՛... Ես ինքս ինձ հայելու մեջ չտեսա, բայց նկատեցի, որ կինը որսաց իմ հայացքը: Իր բարկից նա արդեն ցույց էր տվել, որ ոչինչ չունի թաքցնելու, ուստի ի հեճուկս իմ շանթահարող աչքերի՝ ավելի աշխուժացավ: Զգացի, որ այն մարդկանցից է, որ երբեք հարցերի չի սպասում ու իր կողմից էլ պատասխաններ չունի: Իր շաղ տվածն էր հարց ու պատասխանի կերպով ու փսխածն էր՝ սեփական պատմության տեսքով...

- Լավ չարի՞,- ասաց ու նայեց վարսահարդարին, որի ձայնը միայն ինքը կլսեր: - Ընկերուհի՞դ էր... - Հա, բա էլ ո՞վ... Անտեր շունը խասայաթ ա արքել՝ շաբաթ-կիրակի պիվա, գինի առնի գա ու ինձ էլ դուրս քաշի: Հիմի էլ որ

իմացավ տանը չեմ, գիտի, թե հենց էն ա, պարապ սատկելու ա... Երեկ շեֆս ասավ՝ Ալինա, մազերիդ գույնը ոնց որ չի դառնում, շատ թունդ ա, թե փող չունես, ես կտամ, մենակ թե գնա փոխի, ներկի, մի հատ թարմացի, այ՛նտեր չիկ, մեջերս էլ էն բաց գույներով կզարդարես, ասում ա, որ աշունն արել էիր, շատ սիրուն էր եղել, ու հանեց մի հատ տասանոց դրեց սեղանին, ելավ դուրս: Ես էլ ասի՛ մեռել էմ քո ջանին, ընչի՞ չեմ ներկի որ... Դրա համար քեզ զանգի, ասի՛ վրազ ինձ ժամ գրի, քանի փողս չեմ ծախսել... Սրահի հավաքարարը եկավ մատեց կողքիս բազմոցին: Հիմա արդեն երկուսով էինք լսում ներկվող «անպարիսպ տիկնոջը»: Վարսավիրի անլսելի մեղմությունն ուղղակի գուշակում էի Ալինայի պատասխաններից ու մտքիս մեջ կայուն գրույցը:

- Տղաներդ ո՞նց են, լավ՞ են... - Բա ի՞նչ են... Մեկ էլ անցյալ տարի ես տեսել էի... Հիմա տեսնես. մեծս էս ա բանակի տղայա դառնում, փոքրս էլ իմ երկու բոյն ու քաշն ունի, սպորտսմեն ա, մեղալ ա, որ բերում ա տուն... - Հոր հետ կպա ունե՞մ... - Չէ, ես ունեմ... Իրանք որ զանգում են, հերը գիտի, թե փող են ուզելու, ուղիղ չոռնի ա քցում: Զանգի, ասի՛ բա չես ամաչո՞ւմ... Մարդ էլ իրա էրեխեքին չոռնի քցի: Զանգել էին, որ հարցնեմ ո՞նց ես, ի՞նչ մի խառնվար իրար, գիտեիր՞ փող են ուզելո՞ւ... Արխային, ես նրանց ըստ պահանջի պահում եմ, իրանք թու փողի կարիքը չունեն, ուղղակի տղա են, ի՞նչ իմանամ, երկի հոր կարիք են զգում...

- Բա այլիմենտ չի տալի՞ս... - Տո ի՞նչ այլիմենտ... Երեխեքս իսկի իրա ազգանունը չունեն... Ես ասի՛ որ հերը չի ուզում կամավոր կերպով էրեխեքին գումար տա, էլ ես ինչ ընկնեմ դատարան:

Մերը, դրա ձեռքից այլիմենտ ուզեմ, բա ես դրա քսան հազար դրամին եմ մնացել: Գոհ եմ, ախպեր, պետք չէ՛, ես իմ հալալ քրտինքով իմ էրեխեքին պահում եմ: Թող չիմանա՛ որ մեզ թողեց, գնաց Ռուսաստան, նոր կնիկ առավ, մենք էլ էստեղ մեռանք առանց իրա... - Դե, դու էլ սիրուն աղջիկ ես, Ալինա՞՞ ջան, ո՞վ կմտածի, որ երկու մեծ տղա ունես: Ես էլ մազերդ էլ թարմացնեմք, մի անգամ էլ կարող ես ամուսնանալ:

Ալինայի ձայնը մեղմացավ. - Թ՛, սուս, զատո մի գաղտնի երկրպագու ունեմ, ախշի, 5 տարի շարունակ ամեն ծնունդիս ու մարտի 8-ին մի շքեղ բուկետ ա ուղարկում մեր տուն: Ախշի՛, դու ըստե՞նց ճաշակ տեսած չես լինի. մի տարի չեղավ, որ նույն գույնի բուկետ ուղարկի, միշտ տարբեր, վարդագույնը դրկել ա, կարմիրը, անուշ սիրենդվին, սպիտակը, դեղինը:

- Բայց գիտե՞ս ո՞վ է... - Չէ՛, հնար չկա, չեմ կարում պարզեմ: Ես տարի դաժե ելա գնացի էդ ծաղկի սրահը, հարցրի, խնդրեցի, որ ասեն: Ասում են՝ քուրիկ ջան, ախր էդ մարդը մեզ պայանոջ չի մոտենում, ինքն էլ ուրիշ միջոցով ա պատվիրում ու առաքում... Մենք ի՞նչ իմանանք՝ ո՞վ ա... - Լսի, կարո՞ղ ա մարդդ ա... - Է՛, ես ասում եմ՝ ինքն իրա էրեխեքին ա չոռնի քցում, դու ասում ես՝ մարդդ կլինի: Չէ՛, էսի կարգին մարդ ա... շա՛տ կարգին... - Ի՞նչ ռոմանտիկ է... - Հա՛, ռոմանտիկ է,- երկար լռությունից հետո ասաց Ալինան,- բայց դե թող մեջտեղ գար, տեսնե՞ինք՝ ով էր... Հիմա տարի էլավ, է՛... Մեզ հետ արդեն գրույցին ներկա էին մատնահարդարն ու իր հաճախորդը և մի պարապ ու հղի դիմահարդար, որ հաճախ

էր հորանցում: Անհայտ երկրպագուի փնջերի բույրը ներկա եղող կանաց երևակայության ռունգերին խուտուտ բերեց: Զգացիցիք էլ՝ ինչպես բուրբ մի ուրիշ կողմ թեքեցինք մեր հայացքները՝ որոնելով սեփական վերիիշու մից մի պատահիկ, որի խոնավ պատկերը մի քիչ երևում էր մեր ակնահատակում... Բուրբ սկսեցիցիք քթերս սրբել, ես նույնիսկ փռչեցա՞մ, նայեց հատակին ու առանց անհրաժեշտության կիսախոնավ շորով սրբեց մաքուր հատակը: Լռությունն Ալինայի համար չէր: Երկի խոսելու ցանկության այլքները որսաց նաև նրա հեռախոսը ու էլի զանգեց.

- Էլի էն անմամուսն ա,- ասաց ու աշխուժացավ,- ախշի՛, ի՞նչ ես զահլես տանում, հլը մի ժամվա գործ էլ կա, թե չես համբերում, դու գնա մեր տուն, էրեխեքս տունն են: Հետո տանտերն էլ ա գալու վարձը տանի, կտաս, մինչև գամ, տամ: Դրան շատ երես չտաս, իմացել ա, որ ամուսին չունեմ, շատ ա պոչ խաղացնում... Տո չէ, այ՛նտեր շուն, դրան ով ա շան տեղ դնում... Հիմա գնա՛... Ես էս ա գլուխս շուտ լվանամ, կտրեմ ու գամ... Ախշի, չէ՛, վաղը չեմ կարա, վաղը բժշկի եմ, ստուգման... Վեց ամիսս լրացել ա, զնամ նայեմ էն անտեր ուռուցքն աճել ա, թե փոքրացել... Դե, ինչ ասեի, գլուխս պտի հարթուկեիր, էլի... Ենպես ես ասում, ոնց որ հարսանիք եմ գնալու, ու դու չգիտես... Դե, մինչև դու պատրաստվես, զնաս, ես էլ կհասնեմ... Ու էլ ինձ չզանգես, թե չէ բերանս կբացեմ էքքան ժողովրդի մոտ... Լավ՛... Ինձ ուրիշ սենյակում սպա-

սարկեցին, ու ես Ալինայի պատմության շարունակությունը չիմացա, թեև դա այնքան կանխատեսելի էր: Ու երբ մեկ ժամից դուրս եկա սենյակից, նա մտած էր՝ նոր գունավորված մազերով, ավելի թարմ ու ամառային: Հայելու մեջ ժպտացիցք իրար, ես ասի.

- Ի՞նչ գեղեցիկ եք... Ինքն էլ, թե. - Հա՞, սագո՞ւմ ա սենց... - Հա՛,- ասի,- շա՛տ է սագում,- ու բութ մատս էլ տնկեցի, ինչպես ամուսն ենք սոցցանցերում... Այն նույն տաքսու վարորդը, որն ինձ բերել էր, ետդարձի ճանապարհին էի հայելային նայեց ինձ, որ խոսակցություն բացի. - Այ՛ մարդ, սաղ քաղաք վարսավիրանոց են բացել, մեկ էլ մանեկեն ու պիղիկուր... Է՛ս ինչ բան է... Ես ոչ էլ ժպտացի ու գլուխս դարձրի դեպի դուրս... Հոգեբաններն էլ ինձ նման հետաքրքրասեր մարդիկ են ու հարց են տվել, թե ինչու են ամենափակ ու մութ մարդիկ անգամ սրտները բացում ու գրույցի բռնվում վարսավիրների ու տաքսու վարորդների մոտ: Դե, պատճառը հայելին է: Հայելին, որ ամենախոհեմ միջոցորդն է երկու մարդու գրույցի համար. այն, ինչ չէիր պատմի դեմ դիմաց ու աչքերին սևեռում նայելով, ասում ես հայելու անդրադարձմամբ՝ քեզ ավելի ապահով զգալով: Ով գիտե, զուցե ենթադրանքներ քննարկեմք, թե հայելուց քեզ նայող մարդն այնքան էլ դու չես: Պարզապես վարսավիրանոցները տաքսիներից տարբերվում են սոսկ նրանով, որ այնտեղ մարդկային սրտերի պատմությունները կտրվում են գլուխների վրայից ու ներքև թափվում՝ մազերի տեսքով...

21.07.2020

ԱՐԵՎԱՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԲԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ ՆԻԻ ԵՆՐՔ-ԱՄՆ

ԴԻՎԿՍ...

Այս առաւօտ դիակա գտան գլուխս խոնարհած ստեղնաշարին համակարգիչիս:

Հարուածեմ՝ ճակտիս արեան հոսք մը մեղմ տառերուն անզարդ երանգ էր տուած... Արիւնս լերդացած... Դիագնիչը ըսաւ վճռօրէն. մահը առտուայ մութին էր եկեր: - Սրտի կաթուած է ...

Յետոյ նայեցաւ համակարգիչի պաստառին ճերմակ: Տառ մը միայնակ, որբի մը նման՝ նստա՞ծ էր, կանգնա՞ծ, թէ լո՞ւռ խոնարհած... Զարմացած հարցուց. «Այս ի՞նչ լեզու է»: Ըսին. «Հայերէն: Չորս հազար տարուայ լեզու մարտնչած»:

«Իսկ ի՞նչ տառ է այս», - Հարցուց ան նորէն: «Հայերէն Հո-ն է», - ըսին թռռներս գլուխնին հակած... «Իր առանձնութեան անհուն պահուն մէջ, ինչո՞ւ է ընտրած այս տառը ծուռիկ: «Անուանատա՞ռն է», -հարցուց քննիչը: «Չենք կարծեր», - ըսին՝ գլուխնին կախած իմ բալիկները՝ Կամքն ու Երազը: «Անուանատառ չէ՞»: Իրար նայեցան, զաւակներս տխուր, գլխիկոր, ըսին. «Իր ներաշխարհի սրբութիւններու արծազանգներու պսակի զարդն է՝ -Հո-ն Հայաստանն է: -Մարտնչող Հայն է: Հո-ն Հայրենիքն է, իր կարմիր Հոնն է: -Ես այս բոլորով Հո-ն ապրող, շնչող իր Հայութիւնն է: Մեր հայրը, ըսին. -«Հո» տառով ծնաւ, - «Հո»-վ ապրեցաւ, - «Հո»-վ մահացաւ...»

Պաստառին վրայ Հո տառը խոնարհ, Որ գահակալն է սրբութիւններուն մեր գահնամակին, խաչուած, պարտասած, բազմիցս հրկիզուած, Դարերու փոշին վրայէն նետեց, Յարատեւութեան իր խորհուրդին մէջ հպարտ, անկտորուն, Լռիկ ժպտեցաւ... ՅԱԿՈՒ ԵԱԼՊԱՆՏ ՏԼՏԼԵԱՆ ՀԱԼԵՊ-ՍՈՒՐԻԱ

ԴԱՆԴԱՂՈՒԹԵԱՆ ԵՐԳԸ

Ժամանակն այդքան Դանդաղ կը հալի եւ կը մահանայ Ինչպէս հրեական Բանտերու խորքը Մահուան հացադուլ Յայտարարած եւ մահը սպասող Պաղեստինի քաջ խիզախ հայրուկի Դատարկ աղիքի Պրկուններու մէջ Դանդաղ սողացող Մայր ժամանակը

Եւ ժամանակը Կը ճմռթկուի Ան կը պլլուի Եւ կիսակլոր լուսինի նման Ան ալ կը դառնայ Կիսակլորուած Կիսապլլուած Ինչպէս հրեական բանտախցի մէջ Իր ցուրտ երկաթեայ Մահիճի խորքը Կիսակլորուած Սովէն պլլուած Քաջ պաղեստինցի Այդ հպարտ գերին

Ժամանակն այդքան Դժուար ու դանդաղ Ծանր կը լողայ Շատ վտանգաւոր եւ միապաղաղ Ինչպէս հեռաւոր Որբանոցի մը Ցուրտ

Անհիւրընկալ սենեակներու մէջ Միս-միմակ ապրող Եւ կեանքէն կառչիլ Դարձեալ փորձող որբերու համար Որոք սառնոյցի մայր զանգուածն

Պոկուած Լողացող սառցալեւրան պէս Կը ծփան այդպէս Անկողմնացոյց եւ Աջ-ձախ գարնուող Եւ ճակատագրի Ալեկոծութեան ովկիանոսի մէջ Դանդաղ մահացող ժամանակի պէս Դանդաղ կը շարժին Դէպ անյայտութիւն

Ես ժամանակի հորշոմներուն մէջ Կը շարունակեմ Դանդաղ նկարել Մահացող օրուայ Աղաղակները Եւ փոքրիկի մը Չեռքերուն մէջը Շատ արագ հալող Պաղպաղակի պէս Շատ արագ հալող Դանդաղ մահացող Այս հակասական ժամանակի թոյլ պղպջակները

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունը իրականացնող Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղ: Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62 Վկայական N 01Բ 001543 տրված է 21.03.2005թ. հեռ. (094) 53 44 64 Խմբագրական խորհուրդ Գլխավոր խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան Համակարգչային ձևավորումը՝ «Էլտորադո Պրինտ» ՍՊԸ Տպագրված է «Ռուբիկ Դարիբյան» Ա/Չ տպագրատանը Տպաքանակը՝ 500 Ծավալը՝ 1 տպագրական մանուկ